

– Յրե հա՛... Մեղրաբերձը կարմրեց: Էսոր Վերին թաղում ասում էին, որ Եղաբար ծյուն չկա: Դիմացե՛ք հա՛, ձեզ մատաղ, շատը գնացել է, մնացել է քիչը: Եղաբարում որ ծյուն չկա, ուրեմն Էսոր-Էգուց Սիջևառի հանդերը կբացվեն, Եգևարածի առվի տակ դաղձ կլինի, ի՛նչ դաղձ... Քիչ է մնացել, Աթա ապերը ձեզ մատաղ: Մանր-մունրին մի կերպ արեք, դուք էլ գոտիներդ պնդացրեք... Դուք որ քարից կակուղ ամեն ինչ էլ ուտեք՝ կապրեք, ձեր ոսկորը պինդ է: Երեխաներին նայեք... Էսոր-Էգուց ճանապարհները կբացվեն...

(Աթա ապոր հորդորը՝ ըստ Ակսել Բակունցի «Եղբայրության ընկուզենիները» պատմվածքի)

Երեքշաբթի  
16 հունիսի 2020թ.  
№ 14 (530)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾԱԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:  
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 285) 5 25 63  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru



# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA  
www.gov.am

**Ու եղավ ստի  
հրավառություն,  
Ու խաբեության  
հարսանիք եղավ...  
Ու կյանքս եղավ  
անվերջ դառնություն,  
Եվ արվեստիս տունն  
անտանիք եղավ:**

**Սուրբս լիրե եղավ,  
Աստվածս՝ մռայլ,  
Յրճվանքս՝ շինծու,  
տքնանքս՝ ձրի...  
Ախ, իմ ժողովուրդ,  
քո այնքան շռայլ  
Տվածից քեզ ի՛նչ  
վերադարձրի:**

**Էլ հոգնած հոգիս  
ինչպես դիմանա...  
Կանցնեն տարիներ,  
եւ ո՞վ կիմանա,  
Թե քանի «Պատրանք»,  
քանի «Փարվանա»,  
«Ասպետական» ու  
«Բինգյոլ» կորցրի...**

**Քո երկնքի տակ  
հազարաչքանի  
հինձ մի խոստանա  
հետմահու փառքեր,  
Եթե ներես ու գտնես  
արժանի,  
հրավունք տուր ինձ  
քո հողում պառկել:**

Համո Սահյան

## Արտակարգ դրության ժամկետը երկարաձգվեց մինչեւ հուլիսի 13-ը

Հայաստանում արտակարգ դրության ժամկետը երկարաձգվեց եւս մեկ ամսով: Այդ մասին որոշում ընդունվեց կառավարության հունիսի 12-ի արտահերթ նիստում:

Արդարադատության նախարար Ռուստամ Բադալյանը նշեց, որ որոշմամբ արտակարգ դրությունը երկարաձգվեց մինչեւ 2020 թվականի հուլիսի 13-ը՝ ժամը 17:00-ն ներառյալ:

«Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության հետեւանքով առաջացած արտակարգ իրավիճակը շա-

րունակում է սպառնալ բնակչության կյանքին ու առողջությանը եւ կարող է հանգեցնել անձանց կենսագործունեության բնականոն պայմանների խախտման:

2020 թվականի մարտի 16-ին արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները դեռեւս չեն վերացել, որի մասին են վկայում, մաս-

նավորապես, հունիսի 12-ի դրությամբ հաստատված կորոնավիրուսային հիվանդության դեպքերը, ինչպես նաեւ այն, որ Հայաստանի Հանրապետությունում վարակի հետագա տարածումը եւ վարակի դեպքերի թվի աճը շարունակում են սպառնալ մարդկանց կյանքին ու առողջությանը», – ասված է որոշման մեջ:

## Կապան-Հադրուկ ավտոմայրուղու կառուցումը վտանգված է

Եվրախորհրդարանի պատգամավորները համատեղ հայտարարությամբ են հանդես եկել՝ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ նոր ճանապարհի կառուցման կապակցությամբ: Հունիսի 10-ին ներկայացված համատեղ հայտարարության մեջ նշված է.

«Շուտով մեկնարկելու է անցյալ տարի հայտարարված՝ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղն իրար կապող երրորդ մայրուղու շինարարությունը: Այս նոր ճանապարհային ենթակառուցվածքը Կապանը (ՀՀ) կկապի Հադրուկի հետ (ԼՂ)՝ անցնելով Գուբադլիի եւ

Տաբրայիի շրջանների միջով, որոնք եւս «օկուպացված» են: Որպես կանոն՝ մենք աջակցում ենք նախագծերը, որոնք նպաստում են տարածաշրջանային համագործակցությանը, կապերի հաստատմանը եւ Արեւելյան հարեւանության մարդկանց միջեւ շփմանը: Սակայն, այս ճանապարհը կառուցելու որոշումը կայացվել է առանց Ադրբեջանի իրավասու իշխանությունների համաձայնության՝ միջազգային իրավունքի խախտմամբ: Բացի այդ, այն կարող է խորհրդանշական կերպով ամրացնել Լեռնային Ղարաբաղի եւ դրա շրջակա տարածքների ապօրինի «օկուպացումը»: Ուստի, մենք խորը ափսոսանք ենք հայտնում այս նախաձեռնության կապակցությամբ, քանի որ այն չի նպաստում վստահության, խաղաղության եւ հաշտեցման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: Մենք կրկնում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին եւ նրանց՝ 2009-ին ընդունված հիմնարար սկզբունքներին մեր անփոփոխ



աջակցության մասին: Որպեսզի այս միջնորդությունը հաջողություն ունենա, մենք Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանություններին կոչ ենք անում բարեխղճորեն ակտիվացնել իրենց ստանձնած պարտավորությունները՝ հակամարտության խաղաղ կարգավորման բանակցություններում Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված սահմանների շրջանակում»:

## Առաջարկվում է 4000 եւ ավելի ընտրող ունեցող համայնքներում անցնել համամասնական ընտրակարգի

Կառավարության եւ խորհրդարանական 3 խմբակցությունների համատեղ նախաձեռնությամբ Ազգային ժողովում (ԱԺ) քննարկվել է Ընտրական օրենսգրքում եւ «Կուսակցությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին փաթեթը:

Նախագծով առաջարկվում է ընտրական օրենսգրքով սահմանել մինչեւ 4 հազար ընտրող ունեցող համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների մեծամասնական կարգով ընտրություններ: Իսկ 4 հազար եւ ավելի ընտրող ունեցող եւ բազմաբնակավայր համայնքներում առաջարկվում է սահմանել ՏԻՄ-երի համամասնական ընտրություններ, որին մասնակցելու են բաղադրական կուսակցությունները եւ դաշինքները:

Հիմնական զեկուցող տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանը կարեւորեց՝ բաղաբանական կուսակցություններն իրենց բաղաբանական ներուժը 5 տարի շարունակ կարողանալու են ավազանիում իրացնել. «Սա նշանակում է հետեւյալը՝ նախկինում ունեւում էինք դեպքեր, երբ մեծամասնական

# Գագիկ Ծառուկյանը գրկվեց պատգամավորական անձեռնմխելիությունից. քաղաքական, թե՛ իրավական գործընթաց



■ Հունիսի 14-ի վաղ առավոտվանից ԱԱԾ-ն խուզարկություն է իրականացրել ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի առանձնատանը:

■ Հունիսի 14-ին Գագիկ Ծառուկյանը մոտ 8 ժամ հարցաքննվել է ԱԱԾ-ում:

■ Գագիկ Ծառուկյանի հարյուրավոր կողմակիցներ հավաքվել էին՝ Նախ՝ Առինջի Նրա առանձնատան մերձակայքում, ապա՝ ԱԱԾ-ի շենքի դիմաց:  
200-ից ավելի աջակից բերման է ենթարկվել արտակարգ դրության ռեժիմը խախտելու համար:

■ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության քաղաքական խորհուրդը տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ Նույն օրը հանդես է եկել հայտարարությամբ:

«Այսօր վաղ առավոտից իշխանությունն անցել է «իրավական տեռորի»: Մենք սազնաբանում ենք որպես պատասխան՝ ԲՀԿ Նախագահի վերջին ելույթին, որում նա, առանց երկմաստությունների, Նշեց երկրի առջեւ ծառայած սուր խնդիրները, մոտավորապես լրջագույն ռիսկերը եւ դրանց լուծման միակ հնարավորությունը՝ Նոր, արդյունավետ կառավարում, լրջագույն փոփոխություններ երկրի կառավարման համակարգում:

Տապալելով համաճարակի դեմ պայքարը, դառնալով մեծաթիվ վարակակիրների եւ մահերի պատասխանատու, հասկանալով, որ սարերի հետեւում չեն սոցիալական ծանր խնդիրները՝ ՀՀ իշխանությունները որդեգրել են ընդդիմախոսներին ամեն գնով լռեցնելու քաղաքականություն: Սա պայարդուն էր դեպի Նոր Ռիսկեր տանող ճանապարհի է:

Իշխանությունը խուսափում է ճիշտ ընկալել իրականությունը, ընդունել իր ծախսերը եւ հանրային համերաշխության մթնոլորտում գտնել լուծումներ:

Վաղ առավոտից իշխանության սանձազերծած բռնություններն այլեւս վերածվել են ամենաթողութային: Այս ընթացքում բռնության աչքի առաջ բռնի ուժով բերման են ենթարկվել ԲՀԿ մի քանի տասնյակից ավելի ակտիվիստներ, այդ թվում՝ պատգամավորներ, որոնց հանդեպ եւս ոստիկանները կիրառել են անհամաչափ ուժ: Այս պահին Ազգային անվտանգության ծառայությունում ընթանում է Գագիկ Ծառուկյանի հարցաքննությունը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը վերահաստատում է իր վճռականությունը՝ բոլոր քաղաքակիրթ եւ օրինական միջոցներով պայքարել մեր պետության եւ ժողովրդի շահերի համար, որտե՛ւ կերպ չընկրկել անօրինական ճնշումների առաջ: Հայաստանում այլեւս երբեք իշխանությանը չի հաջողվելու շանտաժով ու բռնությամբ լռեցնելու ընդդիմությունը: Մենք վճռական ենք օրենքի տառին եւ ոգուն հավատարիմ շարունակելու մեր արդարացի պայքարը՝ հոգուն Հայաստանի եւ հայ ժողովրդի փրկության», – ասված է հայտարարության մեջ:

## Վարչապետի խոսնակ. «Տեղի ունեցող իրադարձություններն իրավական դաշտում են»

Տեղի ունեցող իրադարձություններն իրավական դաշտում են, «Ազատության» հետ զրույցում ասաց վարչապետի խոսնակ Մանե Գեւորգյանը՝ ի պատասխան հարցադրման, թե ինչ գնահատական է տալիս

վարչապետը ԲՀԿ ղեկավարի շուրջ գործընթացներին: Մանե Գեւորգյանը Նշեց, որ այլ մեկնաբանություններ չունեն, հորդորում են հետեւել իրավապահների հաղորդագրություններին:



## Բացահայտվել են 2017 թ. ապրիլի 2-ին կայացած ՀՀ ԱԺ ընտրությունների ժամանակ ընտրողներին կաշառք տալու, կաշառք ստանալու հարյուրավոր եւ համակարգային բնույթ կրող դեպքեր

ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված մեծածավալ քննչական եւ այլ դատավարական գործողությունների, ինչպես նաեւ համալիր օպերատիվ-հետախուզական արդյունավետ միջոցառումների արդյունքում հնարավոր է եղել բացահայտել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության մի խումբ անդամների կողմից, Նախնական համաձայնությամբ, 2017 թ. ապրիլի 2-ին կայացած ՀՀ ԱԺ ընտրությունների ընթացքում ընտրողներին

թեկնածուներից, ինչպես նաեւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության օգտին կողմ քվեարկելու համար անձամբ կամ միջնորդի միջոցով ընտրողներին կաշառք տալու բազմաթիվ դեպքեր, որում ներգրավված են եղել ինչպես կուսակցության ղեկավար կազմը, այնպես էլ՝ կուսակցության անդամները: Դարգվել է, որ ընտրությունների Նախընտրական փուլում կուսակցության ղեկավար անդամների կազմակերպմամբ, կուսակցության անդամների ակտիվ ներգրավմամբ

Ինչ վերաբերում է դրան՝ Ազգային անվտանգության ծառայության շենքի դիմաց կատարվածին, ապա ըստ Մանե Գեւորգյանի՝ անհասկանալի է, երբ ընդդիմադիր ամենամեծ խմբակցության պատգամավորներն արտակարգ դրության պայմաններում, երբ արգելված են հավաքներն ու մարդկային կուտակումները, գնում են նման քայլերի՝ վտանգելով քաղաքացիների առողջությունը, այնինչ, հենց իրենք նման պայմաններում պետք է լինեին օրինակ մյուս քաղաքացիների համար:

Եւ հստակ մշակված դերերի բաշխմամբ կուսակցության թեկնածուների, ինչպես նաեւ կուսակցության օգտին քվեարկելու համար ընտրողներին տրվել են հարյուրավոր միլիոն դրամների չափով ընտրակաշառք գումարներ:

Ընդ որում, Նախաքննության ընթացքում կատարվել է շուրջ չորս տասնյակի հասնող խուզարկություն, որի ընթացքում առգրավվել են համակարգի միջոցով կամ ձեռագիր եղանակով կատարված մանրակրկիտ գրառումներ պարունակող փաստաթղթեր, որոնք վերաբերում են ընտրությունների ժամանակ կատարված դրամական միջոցների շարժին՝ ընտրողին, ակտիվիստներին տված գումարի չափին, բարեգործության անվան տակ ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման, բաժանած գումարների դիմաց ստացած ձայների վերլուծության, ինչպես նաեւ քրեական գործի համար նշանակություն ունեցող այլ փաստական տվյալներ, ինչը հիմք է տալիս ողջամիտ պնդումներ կատարելու առ այն, որ դրանք առավելապես հետապնդել են կուսակցության ղեկավար կազմին հաշվետու լինելու նպատակ:

Ուշագրավ է հատկապես այն, որ ըստ հարցաշարի, Նախապես մշակվել է Նույնիսկ հավաքների ժամանակ իբր պատահականության սկզբունքով օգնություն խնդրող անձանց կոնկրետ շրջանակը:

Նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են ակտիվ միջոցառումներ ընտրակաշառք տալու, ստանալու գործընթացին ներգրավված անձանց հստակ շրջանակը պարզելու, նրանցից յուրաքանչյուրի արարքն անհատականացնելու եւ արարքին համարժեք քրեաիրավական գնահատական տալու ուղղությամբ:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:



## ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել է քրեական գործ

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, հետամուտ լինելով հանցավորության դեմ ուղղված պայքարի օրենքով իրեն վերապահված գործառնությունների անշեղ կատարմանը, իրականացված մեծածավալ քննչական եւ դատավարական գործողությունների, ինչպես նաեւ համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել է, որ ՀՀ Կոստայի մարզի Ադինջ համայնքի պաշտոնատար անձինք, անձնական շահագրգռվածությունից ելնելով, իրենց կազմակերպական-տնօրինչական ու վարչատնտեսական գործառնությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելու դիտավորությամբ, «Ֆիման Լյու» ՍՊ ընկերության հիմնադիրների, մասնակիցների ու տնօրենի կողմից օրենքով սահմանված կարգի խախտմամբ

վարձակալությամբ տրամադրել են 7.5 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք, որտեղ համայնքի ղեկավարի որոշումներով ապօրինի կառույցներն օրինականացնելուց հետո եւ առանց հողի նպատակային նշանակությունը փոխելու որպես արտադրական շինություններ օտարել են վերը նշված ընկերությանը: Դրանից հետո վարձակալության տրամադրված 7.5 հա հողատարածքը, որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության հողատարածք, ճանաչվել է ընկերության սեփականություն՝ դրա մասին անհրաժեշտ տեղեկություններ չտրամադրելով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին:

Նշված չարաչառումներից հետո Նույն համայնքի պաշտոնատար

# Բացահայտվել են ապօրինի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում պետությանը տասնյակ միլիարդավոր դրամների հասնող վնասի պատճառման դեպքեր

**ԱԱԾ-ն բացահայտել է ապօրինի ձեռնարկատիրության, ինչպես նաև խաբեության եղանակով պետությանը առանձնապես խոշոր չափերի վնաս պատճառելու դեպքեր: Մասնավորապես, խոսքը Գագիկ Ծառուկյանին պատկանող «Օնիրա Զլաբ» խաղատների գործունեության մասին է, որոնց շահագործմամբ խախտվել ու անտեսվել է օրենքը, պետությանը պատճառվել 40 միլիարդ դրամի վնաս:**

Այս մասին պաշտոնական հաղորդագրություն է տարածել ԱԱԾ-ն: Հաղորդագրությունն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորև.

ՀՀ ազգային անվտանգության ծառայության ստորաբաժանումների կողմից ձեռնարկված համալիր օպերատիվ-հետախուզական արդյունավետ միջոցառումների, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի ծառայողների կողմից իրականացված մեծածավալ քննչական և դատավարական գործողությունների շնորհիվ բացահայտվել են առանց հատուկ թույլտվության լիցենզիայի/լիցենզիայի/լիցենզավորման ենթակա ապօրինի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում, ինչպես նաև խաբեության եղանակով պետությանը առանձնապես խոշոր չափերի վնաս պատճառելու դեպքեր:

Մասնավորապես՝ ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 2010 թ. դեկտեմբերի 29-ին գրանցված «Օնիրա Զլաբ» ՍՊ ընկերության իրավասու անձինք, գիտակցելով 2013 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունված «Հահումով խաղատների և խաղատների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության «ա», «բ», «գ» ենթակետերի ուժով 2014 թվականի հունվարի 1-ից հետո խաղատում և/կամ/շահումով մեթենայացված խաղ և/կամ/անմիջականորեն/խաղատարակի միջոցով/ինտերնետ շահումով խաղ բացառապես կրթական և պատմամշակութային օջախներից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված հեռավորությամբ՝ Կոտայքի մարզի Շարկաձոր, Կայոց Ձորի մարզի Չերմուկ, Գեղարքունիքի մարզի Սեան, Սյունիքի մարզի Մեղրի համայնքների վարչական սահմաններում, Երեան քաղաքի «Չվարթ-Լոնգ» օդանավակայանի տարածքում կազմակերպելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից



հավանության արժանացած 40 միլիարդ դրամից ավելի ներդրումային ծրագրի դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված վայրերում և չափանիշներին համապատասխան գործունեություն իրականացնելու հնարավորության հանգամանքի մասին, արտոնյալ պայմաններով գործունեությունը նույն վայրում շարունակելու, շահումով խաղերի բնագավառում մենաշնորհային դիրք զբաղեցնելու և ՀՀ կառավարությանը խաբեությամբ առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու դիտավորությամբ, թաքցնելով իրական փաստերը, խաբեության եղանակով՝ միևնույն ժամանակ «Օնիրա Զլաբ» ՍՊ ընկերության և Նրա հիմնադիրների ու մասնակիցների կողմից կառուցված և 2011թ. հունվարի 19-ին ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում պետական գրանցում ստացած ընդհանուր 13.3770 հա մակերեսով ժամանցի վայրերը, ինչպես նաև արդեն իսկ գործող «Հանգրի Լա» խաղատունը, ներկայացնելով որպես վերը նշված ծրագրի շրջանակներում 61.146.139.340 մլրդ ՀՀ դրամի ներդրման արդյունքում կառուցված շինություններ և 500 աշխատատեղով բացված ժամանցի վայրեր, մոլորության մեջ են գցել պատկան մարմիններին, ինչի արդյունքում ծրագրին ստացել է ՀՀ կառավարության հավանությունը և 2013 թ. դեկտեմբերի 26-ի 1477-Ա որոշմամբ թույլատրվել է նույն վայրում շարունակել գործունեությունը, որի հետևանքով պետությունը զրկվել է փաստացի առանձնապես խոշոր չափերի՝ 40 միլիարդ ՀՀ դրամի չափով ներդրում ստանալու հնարավորությունից:

Այնուհետև, «Օնիրա Զլաբ» ՍՊ ընկերության իրավասու անձինք, օգ-

տվելով խաբեության արդյունքում ՀՀ կառավարության կողմից ընձեռնված հնարավորությունից, 2013 թ. դեկտեմբերի 27-ին ստացել են ՀՀ Կոտայքի մարզի գյուղ Կերին Պողոկ, Երեան-Արմյան խնամի թիվ 5 հասցեում գտնվող հանգստի և ժամանցի կենտրոնում, շահումով խաղերի, խաղատների գործունեություն իրականացնելու վերաբերյալ ԽՏ-001 լիցենզիան, որից հետո, անտեսելով շահումով խաղերի, խաղատների գործունեությունը խաղատան

## Գլխավոր դատախազը միջնորդություն է ներկայացրել ԱԾ՝ Ծառուկյանին անձեռնախելությունից զրկելուն և կալանավորելուն համաձայնություն տալու համար

ՀՀ Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում 2020 թ. փետրվարի 1-ին հարուցված և վարույթում քննվող բրեյկան գործի նախաքննությամբ ձեռք է բերվել բավարար ապացույցների համակցություն, որով հիմնավորվում է, որ Գագիկ Ծառուկյանը, հանդիսանալով «Ծառուկյան» կուսակցությունների դաշինքի ղեկավար և դրա կազմում ընդգրկված «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ, ՀՀ ազգային ժողովի 2017 թ. ապրիլի 2-ի ներդրումների իր ղեկավարությամբ գործող կուսակցությունների դաշինքի և ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների օգտին քվեարկելու համար ընտրողներին կաշառք տալու նպատակով, ընտրություններին նախորդող ժամանակահատվածում ստեղծել և ղեկավարել է կազմակերպված խումբ, որի կազմում ընդգրկվել է «Ծառուկյան» կուսակցությունների դաշինքի և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կենտրոնական և տարածքային մարմինների աշխատակիցների և այլ անձանց:

Կազմակերպված խմբի համակարգված և արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով գործարկվել է ֆինանսական միջոցների տնօրինման և կազմակերպված խմբի անդամների գործունեության վերահսկման համակարգ, կազմվել են հաշվետվություններ, որոնցում արտացոլվել են տրամադրված ֆինանսական միջոցները, դրանց հաշվին կատարվելիք կամ կատարված ծախսերը, իսկ ընտրողներին տրված կաշառքի վերաբերյալ կազմված ցուցակներում նշվել են նրանց անուն-ազգանունները, անձնագրային տվյալները, ընտանիքի անդամների թիվը և դրան համապատասխան տրամադրվող գումարը՝ յուրաքանչյուր անձին 10000 ՀՀ դրամ:

Կազմակերպված խմբի կազմում ընդ-

կամ շահումով խաղերի կազմակերպման գործունեությունը միայն լիցենզիայով նշված վայրում/հասցեում/ կազմակերպելու մասին «Հահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, խախտելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 14-րդ կետի 14.3. ենթակետի, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պահանջները, առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու դիտավորությամբ նույն տարածքի մեկ այլ վայրում, ստացված լիցենզիայի անվան տակ՝ առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի), 2014 թվականից 2020 թվականներն ընկած ժամանակահատվածում իրականացրել են խաղատան և շահումով խաղերի կազմակերպման լիցենզավորման ենթակա գործունեություն, որի արդյունքում պետությանը պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ 29.750.000.000 ՀՀ դրամի վնաս:

Փաստի առթիվ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում 2020 թվականի հունիսի 13-ին ՀՀ բրեյկան օրենսգրքի 188-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և ՀՀ բրեյկան օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է բրեյկան գործ, կատարվում են անհետաձգելի քննչական և այլ դատավարական գործողություններ՝ հանցավոր սխեմայում ներգրավված անձանց շրջանակը պարզելու, նրանց արարքին բրեյկավական գնահատական տալու, ինչպես նաև պետությանը պատճառված վնասը հատուցելու ուղղությամբ:

Նշենք, որ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գրանցամատյանի տվյալների համաձայն՝ «Օնիրա Զլաբ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2010 թվականին: Հիմնադիրներն են՝ «Մուլտի գրուպ կոնցեռնը», Գագիկ Ծառուկյանը, Ջավահիր Ծառուկյանը (Գագիկ Ծառուկյանի կինը):

Անձինք, կրկին անձնական շահագրգռվածությունից ելնելով, իրենց գործառնությունները ծառայության շահերին հակառակ օգտագործելու դիտավորությամբ, ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 7.5 հա հողատարածքին կից, շինություններով ծանրաբեռնված, 0.8147 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը, առանց նպատակային նշանակությունը փոխելու և ընկերության կողմից ապօրինի կառուցված շինությունների օրինականացման ընթացքում օրենքով սահմանված գումարները չվճարելով, դրանք օրինականացնելու օժանդակելու նպատակով, ներկայացնելով որպես շինություններով չծանրաբեռնված հողամաս, ուղղակի վաճառքի միջոցով օտարել են ընկերությանը: Այնուհետև, համայնքի ղեկավարի որոշմամբ նշված հողի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական հողատեսքի փոխվել է արդյունաբերականի, որի արդյունքում համայնքի բյուջե չի մուտքագրվել 36.539.925 դրամ, իսկ 7.5 հա հողամասը, որպես

գյուղական նշանակության հողատարածք ուղղակի վաճառքի միջոցով ընկերությանը չօտարելով, համայնքի բյուջե չի մուտքագրվել 2.925.000 դրամ: Նույն հողատարածքն արդեն որպես արդյունաբերության, ընդերք-օգտագործման ու այլ արտադրական նշանակության հողատարածք ընկերությանը չօտարելով՝ համայնքի բյուջե չի մուտքագրվել 339.300.000 դրամ, ինչի հետևանքով Եական վնաս է պատճառվել համայնքի և պետության օրինական շահերին, որն անագուշակությամբ առաջացրել է ծանր հետեանքներ:

Դեպքի առթիվ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում հարուցվել է բրեյկան գործ, նախաքննությունը շարունակվում է:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ բրեյկան դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:



# ՍԵՅՐԱՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ. Ճանաչված գիտնականը, մանկավարժն ու կազմակերպիչը



**ՅԵՐՄԻԵ ԳԵՒՈՐԳՅԱՆ**  
ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի տեղեկատվական տեխնոլոգիաների, ինֆորմատիկայի և ավտոմատացված համակարգերի ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Լրացավ ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղի հիմնադիր տնօրեն (1997-2012 թթ.), «Տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինֆորմատիկա և ավտոմատացված համակարգեր» («SS, Ի և ԱՅ») ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.դ., պրոֆեսոր Սեյրան Բալասանյանի ծննդյան 75-րդ տարեդարձը և գիտամանկավարժական գործունեության 50-ամյակը:

Ծնվել է 1945թ. հունիսի 19-ին ՅԽՍՀ Ղափանի շրջանի Կաղնուտ գյուղում: 1963թ. ոսկե մեդալով ավարտել է Ղափանի թիվ 1 միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է ԵրՊԻ-ի «Ավտոմատիկա և հաշվողական տեխնիկա» ֆակուլտետի ավտոմատիկայի և հեռուստամեխանիկայի բաժինը: 1968թ. գերազանցության դիպլոմով ավարտելով ինստիտուտը՝ անցել է գիտամանկավարժական աշխատանքի «Ավտոմատիկա և հեռուստամեխանիկա» («Ա և Գ») ամբիոնում:

1968-1970թթ. խորհրդային բանակում լեյտենանտի զինվորական կոչումով ծառայության ավարտից հետո Ս. Բալասանյանը վերադարձել է ԵրՊԻ, որտեղ և անցել է նրա ողջ աշխատանքային ուղին: Աշխատել է «Ա և Գ» (մինչև 1978թ.), այնուհետև նոր կազմավորված «Ավտոմատացված կառավարման համակարգեր» («ԱԿՅ») ամբիոններում ասիստենտի և ավագ դասախոսի պաշտոններում:

Ասպիրանտական տարիներին ԽՍՀՄ-ում քոմպիյութերային մոդելավորման հիմնադիր, ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ն.Գ. Բուպենկոյի ղեկավարությամբ ուսումնասիրել է բարդ տեխնիկական համակարգերի մոդել-



Լրացավ ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղի հիմնադիր տնօրեն, պրոֆեսոր Սեյրան Բալասանյանի ծննդյան 75-րդ տարեդարձը

լավորման հիմնահարցերը, որոնց կիրված թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է 1983թ. և ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ապա դոցենտի գիտական կոչում: 1992-1997թթ. ղեկավարել է «ԱԿՅ» ամբիոնը: Այդ պաշտոնում դրսևորվեցին Ս. Բալասանյանի կազմակերպչական

ունակությունները: Ցրտի, մթության և հիասթափության այդ տարիներին ամբիոնի գիտամանկավարժական ներուժի զգալի արտահոսքի պայմաններում Ս. Բալասանյանը, համախմբելով և երիտասարդ կադրերով համալրելով դասախոսական կազմը, կարողացավ ապահովել ամբիոնի առաջընթացը:



**ՕԼԵԳ ԳԱՍՊՐԱՅԱՆ**

## Նորհավորանք և վաստակի գնահատություն

### Յարգելի հոբելյար, մեր լավ գործընկեր և բարեկամ Սեյրան Բալասանյան

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Ակադեմիկոս Գ.Լ. Արեշյանի անվան «Կառավարման համակարգեր» ամբիոնի թո գործընկերները սրտանց շնորհավորում են 75-ամյակիդ կապակցությամբ՝ ցանկանալով քաջ առողջություն և երկար տարիների բեղմնավոր ու արգասաբեր գործունեություն:

Ձեր դասախոսական և գիտական գործունեությունը սկսելով մեր ամբիոնում, ստանալով հիմնարար գիտելիքներ, հմտություններ և փորձ, Դուք այն մեծ հաջողությամբ ներդրեցիք սկզբում մայր ամբիոնում, իսկ այնուհետև, ավելի մեծ եռանդով, «Պոլիտեխնիկ»-ի Կապանի մասնաճյուղի զարգացման և կայունացման գործընթացում: Այդ շնորհակալ գործը մինչև այժմ էլ շարունակվում էք Ձեզ հատուկ աշխատասիրությամբ:

1997 թվականից ՀՊՀ-ի նոր կազմավորվող Կապանի մասնաճյուղի հիմնադիր տնօրենի պաշտոնում սկսվեց Ս. Բալասանյանի աշխատանքային գործունեության մի նոր փուլ՝ լի արարման հաճելի և դժվարին պահերով: Բուհական ավանդույթներ չունեցող Կապանի անբարենպաստ պայմաններում ձեռավորվեցին մասնաճյուղի վեց ամբիոնները: Ս. Բալասանյանի անմիջական ջանքերով են ստեղծվել մետալուրգիայի, քոմպիյութերային, սխեմատեխնիկայի լաբորատորիաները, հեռավար ուսուցման և տեխնոլոգիական կարողություններով լարանները: Սերտ գործընկերային հարաբերություններ հաստատելով ՀՊՀ-ի ղեկավարության հետ՝ Ս. Բալասանյանին հաջողվեց կոմբինատի ֆինանսական աջակցությամբ կազմակերպել գլխավոր և ուսումնալաբորատոր մասնաշենքերի հիմնանորոգումը, վերականգնել ջեռուցման համակարգը, քայքայումից փրկել մյուս մասնաշենքերը: Երբ բարձր ճնշման մայրուղային ջրատարի վթարի հետևանքով լողջրեն վնասվել էր նոր հիմնանորոգված գլխավոր մասնաշենքը, հույս չկար, որ, ըստ Կապանի քաղաքապետարանի հանձնաժողովի, «վթարային» կարգավիճակով մասնաշենքը երբեք կկորոզվի: Անգնահատելի է Ս. Բալասանյանի ավանդը գլխավոր մասնաշենքի վերականգնման գործում: Նա կարողացավ «Հայջր-մոնոլոյտի» ՓԲ ընկերության շուրջ 46 մլն դրամ միջոցներն ուղղել վթարված մասնաշենքի հիմնանորոգմանը:

Մեծ է Ս. Բալասանյանի ավանդը Սյունիքի մարզում ինֆորմատիկայի, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ու տարածման ասպարեզում: Լրա ղեկավարությամբ «Եվրասիա» հիմնադրամի միջոցներով մասնաճյուղում կազմակերպված համակարգչային դասընթացներում 1998-2002 թթ. վերապատրաստվել և վերաորակավորվել է Սյունիքի մարզի շուրջ 250 ունկնդիր՝ նախկին ճարտարագետներ, տեխնիկներ, ուսուցիչներ և բանվորներ: Նրա նախաձեռնությամբ հիմնադրված ՏՏ ոլորտի «Սյունի-բոմ» ՍՊ ընկերության և ՀՊՀ Կապանի մասնաճյուղի ջանքերով համացանցը (Ինտերնետը) 2000թ. հունվարին մուտք գործեց Սյունիքի մարզ՝ մեծապես նպաստելով մարզի հետագա սոցիալ-տնտեսական զարգացմանը և ՏՏ ոլորտի ճարտարագետների պատրաստմանը:

Մասնաճյուղի տնօրենի պաշտոնավարման ողջ ընթացքում (1997-2012թթ.) մշտական ուշադրության կենտրոնում էին մասնաճյուղի դասախոսական կազմի, աշխատողների և ուսանողության ուսումնաշխատանքային և սոցիալական պայմանների բարելավման հարցերը: 2006 թվականից մասնաճյուղի դասախոսական կազմի աշխատավարձերը հավասարեցվեցին Երեւանի կրթահամալիրի դասախոսական կազմի աշխատավարձերին, իսկ տնօրենի պաշտոնավարման ավարտին՝ 2012թ., 15%-ով գերազանցվեց այդ ցուցանիշը:

Ս. Բալասանյանի անմիջական ղեկավարությամբ են գործուն մասնակցությամբ է 1998թ. կազմավորվել մասնաճյուղի կառավարման ավտոմատացված համակարգերի և ինֆորմատիկայի (հետագայում՝ «ՏՏ, Ի և ԱՅ») ամբիոնը, որը հասարակական հիմունքներով ղեկավարել է մինչև 2013թ.: Ամբիոնի լաբորատորիաները հազեցվել են ինտերնետին լծողված արդիական քոմպիյութերներով, տեղեկատվության արտապատկերման ու հեռատեսակայի ժամանակակից սարքավորումներով:


Ս. Բալասանյանը կարողացել է դասախոսական և գիտամեթոդական աշխատանքը հաջողությամբ զուգակցել տնօրենի, իսկ 2012-2019 թվականներին՝ տնօրենի գիտական գծով տեղակալի վարչական աշխատանքների հետ: Ս. Բալասանյանը 2019թ. հունվարից նշանակվել է մասնաճյուղի «ՏՏ, Ի և ԱՅ» ամբիոնի վարիչի պաշտոնակատար: Նա հրատարակել է 27 ուսումնամեթոդական աշխատանք, այդ թվում 7 ուսումնական ձեռնարկ և 33 ԿԳԼ-ի կողմից հաստատված մեկ բուհական դասագիրք: Արժանացել է ՀԱՊՀ-ի 2009թ. հրատարակված «Լավագույն ուսումնական ձեռնարկի» մրցանակաբաշխության 1-ին մրցանակին:

Արգասաբեր է Ս. Բալասանյանի գիտահետազոտական գործունեությունը: Նրա ղեկավարությամբ գործող գիտական խումբը

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղը



# Շնորհավորանք եւ վաստակի գնահատություն



**ՈՍԱՆԻԿ ՄԱՐՈՒԽՅԱՆ**  
ՀԱՊՀ ռեկտոր,  
պրոֆեսոր

## Հարգարժան Սեյրան Շամիրի

Ընդունեցե՛ք իմ ամենաջերմ ու անկեղծ բարեմաղթանքները Ձեր 75-ամյա հոբելյանի եւ «Պոլիտեխնիկ»-ում կետարյա աշխատանքային գործունեության առիթով: Մեր համալսարանում Ձեր աշխատանքային եւ հասարակական գործունեության ամբողջ ժամանակահատվածում ցուցաբերել եք հմուտ դասախոսի, պրոֆեսորի գիտնականի եւ ամենակարեւորը՝ սկզբունքային անձնակազմի անդամների համար շնորհակալական հարգանքներ: Համալսարանի համար դժվարին մի փուլում Դուք ստանձնեցիք Կապանի մասնաճյուղի

տնօրենի պատվավոր եւ նույնպես պատասխանատու պաշտոնը եւ արեցիք ամեն ինչ, երբեմն նույնիսկ անհնարինը, այդ կարեւոր կառույցի կայացման ու զարգացման գործում: Անուրանալի է Ձեր ավանդը տարածաշրջանի համար կարեւորագույն մասնագիտությունների գծով որակյալ կադրերի պատրաստման, ուսումնալսաբարատոր բազայի հարստացման, մեթոդական ապահովվածության ու այլ ենթակառուցվածքների զարգացման գործում: Ձեր դասախոսական աշխատանքի եւ հետազոտական գործունեության հաջող զուգակցումն արտացոլվել է բազմաթիվ գիտական հրատարակումներում, դասագրքերում եւ արտասահմանում հրատարակված մենագրությունում:

Համոզված եմ, որ այսուհետ եւս Ձեզ բնորոշ վճռակալությամբ ու սկզբունքայնությամբ կշարունակեք ծավալել Ձեր հետազոտական գործունեությունը՝ ի շահ «Պոլիտեխնիկ»-ի եւ մասնավորապես խիստ կարեւոր նշանակություն ունեցող Կապանի մասնաճյուղի:

||



**ԱՏՈՒ ՋԱՆՏՈՒՂԱՅԱՆ**  
ՀՀ ֆինանսների  
նախարար

## Հարգելի պարոն Բալասանյան

«Պոլիտեխնիկում» կրթվել են սերունդներ, որոնք հիրավի արժանի տեղ են զբաղեցնում թե՛ Հայաստանի եւ թե՛ համաշխարհային իրականության մեջ: «Պոլիտեխնիկում» ուսումնառությունը երբեք չի ընկալվել միայն որպես պարզունակ՝ ակադեմիական գիտելիքի ստացման հնարավորություն: «Պոլիտեխնիկը» նախ եւ առաջ աշխարհայացքի ձեւավորման միջավայր է: Երբեմն, հայեցակարգային շփոթությունը պայմանավորված հարցին, թե ո՞րն է այս կամ այն հաստատությունը, պատասխանի առաջին վարկածը, որ ծագում է՝ կառույցի աշխարհագրական տեղի բացահայտումն է լինում, մինչդեռ՝ «Պոլիտեխնիկ» դեպքում վստահաբար դա

շեքը չէ, այլ այդ շեքի բովանդակությունն է, որը միարժեքորեն արդյունք է պրոֆեսորադասախոսական կազմի: Կազմն ամբողջությամբ եւ յուրաքանչյուր անդամն առանձին՝ միջավայրի կերտողներն են, որտեղ ուսանողը ստանում է ապրելու, ստեղծագործելու եւ նորը սինթեզելու անփոխարինելի գիտելիք:

## Հարգարժան ուսուցիչ

Շնորհավորում եմ ձեր 75-ամյա տարեդարձի կապակցությամբ:

Ինձ թույլ չեմ տա արտահայտվել գիտության մեջ Ձեր ներդրման մասին, բայց անդրադառնալով մանկավարժական գործունեությանը, սիրով կարձանագրեմ, որ Դուք «Պոլիտեխնիկ» բազմաթիվ սերունդները ներկայացնողների մտահորիզոնի կայացման գործում անուրանալի ավանդ ունեք: Ձեր դասախոսական անձնվեր գործունեության վկայությունն են Ձեր ուսանողների բազմամարդ բանակը եւ յուրաքանչյուր ուսանողի այն ընկալումը, որ Ձեր աշխատանքն ամբողջությամբ ուղղված է եղել հենց իր կայացմանը:

Կրկին շնորհավորելով, մաղթում եմ երկար տարիների առողջ եւ ստեղծագործ կյանք՝ ի նպաստ համայն հայության երազած ՀՃՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ եւ վերջինիս կիրթ ու գրագետ ԶԱՆԱԶԱՆԻ:

||



**ՔՐԻՏՈՍ ՆԱԶԱՅԱՆ**  
Պրոֆեսոր

Հարգելի խմբագրություն, հունիսի 19-ին լրանում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի պրոֆեսոր, տեխնիկական գիտությունների դոկտոր Սեյրան Շամիրի Բալասանյանի ծննդյան 75-րդ համարակալված ամյակը:

առաջ, նախ որպես «Պոլիտեխնիկ» լավագույն ուղի ու աշխատանքի ուսանող, ավարտելուց անմիջապես հետո թողարկող ամբիոնում մնացիք որպես դասախոս, այնուհետեւ՝ գիտությունների թեկնածու-դոցենտ, մի քանի տարի անց արժանացաք գիտական ամենաբարձր՝ տեխնիկական գիտությունների դոկտորի աստիճանի: Էլ բան չմնաց...

Ձեր հարուստ գիտելիքներն ու կենսափորձը շնորհակալությամբ «Պոլիտեխնիկականի» ուսանողների մի քանի տասնյակ սերունդների՝ Ձեր նպաստը բերելով մեր հայրենիքի տեխնիկական կադրերի պատրաստման շնորհակալ գործին:

Հրավարվեցիք արածով, չդարձաք Լոյի ազգավ, Ձեր մեջ խոսեց ծննդավայրի արյունը եւ կանչեց: Տեղափոխվեցիք Լեռնահայաստան, Սյունյաց աշխարհի երկրներն ու անտառները կանչեցին իրենց արժանավոր զավակին:

Անգնահատելի է Ձեր ավանդը Սյունիքում ինժեներական կադրերի պատրաստման գործում, ինչը մեծ սիրով ու նվիրվածությամբ շարունակում եք առ այսօր:

Սրտանց շնորհավորում եմ 75-ամյակը: Ընդունիր առողջության, երկարակեցության, ընտանեկան երջանկության ու բերմավոր գիտամանկավարժական աշխատանքի իմ բարեմաղթանքները:

||



**ԱՐԹՈՐ ԿՈՍԱՆՂԱՅԱՆ**  
ՀԱՊՀ Կապանի  
մասնաճյուղի  
տնօրեն, տնտեսագիտության  
թեկնածու, դոցենտ


## Հարգարժան Սեյրան Շամիրի

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի կոլեկտիվի եւ անձամբ իմ անուկից ընդունեք Ձեր շնորհավորանքները՝ Ձեր ծննդյան 75-ամյակի առթիվ:

Դուք, որպես մեծավաստակ գիտնական, Ձեր կետարյա գիտամանկավարժական գործունեությամբ շոշափելի ավանդ եք ունեցել մեր մասնաճյուղի կայացման գործում: Ձեր աշխատանքային կենսագրությունն արժանի գնահատական է ստացել հանրության կողմից:

Մաղթում եմ առողջություն եւ եռանդ, որպեսզի դեռ երկար տարիներ Ձեր փորձը, գիտելիքներն ու հմտությունները փոխանցեք երիտասարդ սերունդին:

||



**ՍԱՐԳԻՍ ՍԻՄՈՆՅԱՆ**  
ՀՀ գիտության  
վաստակավոր  
գործիչ, ՀԱՊՀ  
«Տեղեկատվական տեխնոլոգիաների եւ ավտոմատացման» ամբիոնի  
վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

## Հարգելի Սեյրան Շամիրի

Շնորհավորում եմ ձեր 75-ամյակի առիթով, մաղթում եմ բաջառողջություն, Լորանոր հաջողություններ թո աշխատանքային եւ գիտական գործունեության մեջ:

Թող ավելի արգասաբեր լինի թո հետագա անվարան ընթացքը՝ Տիրոջ հովանու ներքո... Թող էլ ավելի բազմապատկվի անմնացորդ նվիրումդ Սյունյաց փառապանծ աշխարհին:

||



**ԱՆԻԿ ԵՐԻՄԱՆՅԱՆ**  
ՀԱՊՀ ԿՄ-ի  
ղեկան,  
տեխնիկական  
գիտությունների  
թեկնածու,  
դոցենտ

Ծննդյան 75-ամյակի եւ «Պոլիտեխնիկում» գիտամանկավարժական գործունեության 50-ամյակի կապակցությամբ շնորհավորում եմ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի Տեղեկատվական տեխնոլոգիաների, ինֆորմացիայի եւ ավտոմատացված համակարգերի ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սեյրան Շամիրի Բալասանյանին:

Ս.Բալասանյանի աշխատանքային գործունեությունն ամբողջովին պոլիտեխնիկական է, նա նշանակալի ներդրում է ունեցել նաեւ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի կայացման գործում, երկար տարիներ, որպես տնօրեն, հաջողությամբ ղեկավարել մասնաճյուղի աշխատանքները:

Ս.Բալասանյանը նաեւ ճանաչված գիտնական է եւ մեծ ձեռքբերումներ ունի գիտության ասպարեզում:

Հարգարժան հոբելյարին մաղթում եմ բաջառողջություն, հուսով եմ՝ դեռ երկար տարիներ մասնագիտական կարողություններն ու հմտություններն իրեն հատուկ եռանդով եւ նվիրվածությամբ կծառայեցնի հարազատ «Պոլիտեխնիկին»:

||



**ԱՆԱՅԻՏ ԱՅՎԱՆՅԱՆ**  
ՀԱՊՀ Կապանի  
մասնաճյուղի  
Բնական գիտությունների  
եւ տեղեկատվական  
համակարգերի  
ֆակուլտետի  
ղեկան, տեխնիկական գիտությունների  
թեկնածու,  
դոցենտ

Կան մարդիկ, ովքեր աշխարհ են գալիս հատուկ առաքելությամբ եւ ողջ գիտակցական կյանքում անում են ամեն ինչ՝ այդ առաքելությունը պատվով, արժանապատվությամբ եւ պատասխանատվությամբ իրագործելու համար: Կրթության, գիտության, մանկավարժական ասպարեզի ինքնատիպ ու ակնազարկ նվիրյալ է Սեյրան Բալասանյանը, ով շուրջ հինգ տասնամյակ կերտել եւ կերտում է իր աշխատանքային կենսագրությունը՝ լի գիտակրթական ձեռքբերումներով եւ նվաճումներով:

Սեյրան Բալասանյանի բնատուր օժտվածությունը, համակողմանի կրթվածությունը, կազմակերպչին հատուկ որակները՝ աշխատասիրությունը եւ նպատակասլացությունը ցայտուն դրսևորվեցին ինչպես գիտամանկավարժական, այնպես էլ կազմակերպական աշխատանքում: Նրան բաժին հասավ յուրահատուկ մի ժամանակաշրջան, երբ դրված էր Սյունիքի տնտեսությունը ճարտարագիտական հմուտ եւ որակյալ կադրերով համարելու հրամայական պահանջը: Ստեղծագործական բազմակողմանի որոնումների, եռանդուն աշխատանքի եւ կազմակերպչական մեծ ձիրքի շնորհիվ Ս. Բալասանյանին հաջողվեց իր շուրջը համախմբել կարող ուժերի եւ համառությամբ, հետեւողականորեն զարգացնել ու վերածնել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղը՝ դարձնելով այն ճարտարագիտական կրթության ու տեխնոլոգիական մտքի կենտրոն եւ որակյալ ճարտարագետ-մասնագետների դարբնոց:

Առաջին իսկ շփումներից ինձ հիացրել են Բալասանյանի հայերենի գերազանց իմացությունը, աշխատասիրությունը, պատասխանատվության բարձր զգացումը, հետազոտական ու վերլուծական անվիճելի կարողությունները եւ աշխատանքի ինքնատիպ ոճը:

Ուրախությամբ կարող եմ արձանագրել, որ կրթական ոլորտի բազմամուտ գործիչը, բազմազբաղ դասախոսը, իր բնագավառի ճանաչված ու գնահատված գիտնականը, հայեցի նկարագրով եւ ներհուն խառնվածքով մտավորական այսօր էլ գտնվում է գիտամանկավարժական եւ կազմակերպչական ունակությունների բարձունքում եւ շարունակում է իր անուրանալի ավանդը ներդրել տեխնոլոգիական կրթության զարգացման գործում: Ս. Բալասանյանն անմնացորդ նվիրումով եւ իրեն հատուկ երիտասարդական ավյունով իր հարուստ գիտելիքները եւ փորձն է հարդորում ինչպես ուսանողներին, այնպես էլ երիտասարդ մասնագետներին, ինչը բարձր է գնահատվում ուսանողների կոլեկտիվի կողմից:

Հարգելի պարոն Բալասանյան, Ձեր վաստակաշատ ստեղծագործական աշխատանքի տարիներին ստացած պարգևները խոսուն վկայությունն են մեր երկրի պետական, հասարակական ու գիտակրթական շրջանակների կողմից Ձեր հանդեպ տածվող մեծ հարգանքի, սիրո եւ վստահության:

Ձեր սրտն շնորհավորում եմ Ձեզ՝ 75-ամյա հոբելյանի եւ աշխատանքային գործունեության 50-ամյա տարեդարձի առթիվ, մաղթում բաջառողջություն, երկար տարիների բերմավոր գործունեություն, գիտակրթական նոր ձեռքբերումներ եւ ամենայն բարիք: ||

# «Այունյաց երկրի» ավտոմեքենան հրկիզելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է

2019 թ. փետրվարի 5-ին վաղ առավոտյան Կապան քաղաքի Շահումյան փողոցի 20 շենքի բակում հրկիզվել էր «Այունյաց երկիր» թերթին պատկանող «Վազ 21214» մակնիշի 831 LL 01 հաշվառման համարանիշի մեքենան:

Դեպքից մեկ օր հետո՝ փետրվարի 6-ին, անհայտ անձը «Այունյաց երկրի» էլեկտրոնային հասցեին հաղորդագրություն էր ուղարկել այն մասին, որ ունի մեքենան այրողի վերաբերյալ տեսաձայնագրություն եւ առաջարկել էր գնել այն՝ տեղեկացնելով, որ դրա մի հատվածն ուղարկել է լրատվամիջոցի էլ.փոստին:

Երկր օրը, ավելի ուշ, նույնաբովանդակ հաղորդագրություն եւ վնասաբեր ծրագիր պարունակող տեղեկատվություն է ուղարկվել «Այունյաց երկրի» էլ. փոստին՝ նպատակ ունենալով ոչնչացնել լրատվամիջոցի համակարգչային տեղեկատվությունը եւ ծրագրերը, սակայն հակավիրուսային ծրագիրը թույլ չի տվել վիրուսի գործարկումը եւ հանցագործությունն ավարտին չի հասցվել՝ այն կատարողի կամքից անկախ հանգամանքներով:

Ինչպես մեքենան հրկիզելու դեպքի առթիվ, այնպես էլ լրատվամիջոցի համակարգչային տեղեկատվությունը եւ ծրագրերը ոչնչացնելու փորձ կատարելու դեպքի առթիվ հարուցվել են քրեական գործեր, որոնք այնուհետեւ միացվել են մեկ վարույթում:

2019 թ. դեկտեմբերի 11-ին քրեական գործի վարույթը կասեցվել է՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի ինքնությունը պարզված չլինելու հիմքով:

2020 թ. մայիսի 20-ին, սակայն, քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

«Այունյաց երկիրը» բարձր է գնահատում կասեցված վարույթը վերսկսելու որոշումը՝ համոզված լինելով, որ դա իրավապահ մարմինների հետեւողական աշխատանքի արդյունք է:

Հիմա արդեն հույս ունենք, որ հանցագործներն ու նրանց ֆինանսավորողը եւ կազմակերպիչները կկանգնեն ոչ միայն Աստուծո հրատապանի առաջ:

«ԱՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»



Դեռևս անցած տարվա վերջին նախատեսվել էր հիմնանորոգել Մեղրու տարածաշրջանում U-2 միջպետական ճանապարհի 10 կիլոմետրանոց հատված՝ Այգեծորի խաչմերուկից սկսած մինչև Մեղրի: Հայտարարված մրցույթում, որ վերջերս է կայացել, հաղթող է ճանաչվել Մեղրու «ՃՇՇ» ՍՊ ընկերությունը:

# ԱՉԱՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Ճանապարհը կենդանի օրգանիզմ է, նրան տեղ պետք է լինի, ամենօրյա տեղ...»

**Մեղրեցի ճանապարհաշինարարներն այս տարում եւս ձեռքները ծալելու ժամանակ չեն ունենա: Նրանց վստահված ճանապարհների ձմեռային սպասարկման անդրադարձել էինք մեր թերթի փետրվարի 18-ի համարում՝ «Մեղրեցի ճանապարհաշինարարները շուրջօրյա հերթապահություն են իրականացնում» հրապարակմամբ:**

Յերթական աշխատանքային այցով (հունիսի 2) լինելով Մեղրիում, առաջինը հենց ճանապարհաշինարարների գործերին ենք առնչվում՝ սկսած Դիբազի լեռնանցքից, ավելի ստույգ՝ մինչև դրան հասնելը:

Նախ ակնատես ենք լինում ճանապարհի ինամված կողերերին եւ փոսային խորոգումներին, իսկ Այգեծորի խաչմերուկից սկսած արդեն ճանապարհաշինարարական տարբեր տեխնիկա է աշխատում:

Մեղրու «ճանապարհների շինարարության եւ շահագործման ձեռնարկություն» ՍՊ ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանը, ում հեղինակում ենք ընկերության վարչական շենքում, մանրամասնում է առաջիկայում անելիքները՝ մասնավորապես նշելով, որ ձգտում են իրենց վստահված ճանապարհները պահել այսօրվա պահանջներին համահունչ, փորձում բարեկարգ ճանապարհով բարձրացնել մարդկանց տրամադրությունը:

Դեռևս անցած տարվա վերջին նախատեսվել էր հիմնանորոգել Մեղրու տարածաշրջանում U-2 միջպետական ճանապարհի 10 կիլոմետրանոց հատված՝ Այգեծորի խաչմերուկից սկսած մինչև Մեղրի: Հայտարարված մրցույթում, որ վերջերս է կայացել, հաղթող է ճանաչվել Մեղրու «ՃՇՇ» ՍՊ ընկերությունը: Պայմանագիրը կնքելուց հետո ձեռնամուխ են եղել ճանապարհի մաքրմանը. շինարարության նախագծային արժեքը մեկ միլիարդ 15 միլիոն դրամ է:

Մեղրեցի ճանապարհաշինարարների այս տարվա հիմնական առաջադրանքն է դա, բացի այդ սուբվենցիոն ծրագրով Ազատ Գասպարյանը նախատեսված է 150-160 միլիոն դրամի սահմաններում ներհամայնքային ճանապարհների խորոգում:

Գարնանային-ամառային տարեշրջանը մեղրեցի ճանապարհաշինարարները սկսել են փոսային խորոգումներով, Մեղրու կլիման հնարավորություն է տալիս ցածր գոտում այդ աշխատանքներն իրականացնել մարտի սկզբներից, իսկ բարձրադիր գոտում՝ ապրիլից:



Ազատ Գասպարյանի փոխանցմամբ՝ փոսային խորոգումների մեծ խնդիր չեն ունեցել, ինչպես սկսել են զծանշման աշխատանքները:

Ինչ վերաբերում է վերը նշած 10 կմ ճանապարհահատվածի հիմնանորոգմանը, այն իրականացվում է Նոր տեխնոլոգիայով:

Իսկ այն կարողացանք:

– Կարծում եմ տեղեր կան, որ կարողացանք այդ տեխնոլոգիան, բայց մենք ունենք ճանապարհահատվածներ, որտեղ կաշխատենք՝ մանրազնին ուսումնասիրելով հողային պատտառի վիճակը, իսկ անհրաժեշտության դեպքում կփոխենք պատտառի հողային մասը, – ներկայացնում է Ա. Գասպարյանը: – Դրանք պիտի բանդենք մեկ-երկու մետր խորությամբ, արտաչափ բարերով բարայից անենք, որ ճանապարհը կարողանա դիմանալ, հատկապես այսօրվա ծանրաբաշ մեքենաների դեպքում: Գասպարյանի բոլոր արհեստական կառուցվածքները շինարարության ընթացքում ուսումնասիրվում են, անհրաժեշտության դեպքում կատարվում են բետոնապատման կամ երեսապատման աշխատանքներ, ինչպես նախատեսված է ծրագրում, որ բավականին հաջողված է...

Ընկերության տնօրենի փոխանցմամբ՝ կադրերով եւ շինակազմով ապահովված են, մոտ 500 տոննա բիտում են կուտակել, տեխնիկական հավաքակազմը տարեցտարի համարվում է, վերջերս ձեռք են բերվել Նոր ասֆալտփոխիչ, գրեյդեր եւ գլոն (կատոկ), որ հայտարարված մրցույթներին ընկերությունը

համապատասխանի բոլոր չափանիշներին: Գարնանը լրատվամիջոցներով հրապարակումներ եղան, թե բարաթափումներ են եղել Կապան-Ծավ-Մեղրի այլընտրանքային ճանապարհի վրա:

Ա. Գասպարյանի փոխանցմամբ՝ բարաթափումներ լինում են, բայց այնպես չէ, որ ճանապարհ է փակվել:

Իրենք յուրաքանչյուր նման պատահարին օպերատիվորեն արձագանքում են: Ինչ վերաբերում է այլընտրանքային ճանապարհին, ապա այդտեղ ավանդաբար սողանքային երեւոյթներ են նկատվում, մասնավոր ծավ-Կապան ճանապարհահատվածում:

Իսկ գործող գլխավոր մայրուղու ծածկը հատկապես տուժում է այն պատճառով, երբ 12 տոննա բեռնատարողությամբ մեքենային 25 տոննա բեռ են բարձում՝ երկու անգամ նախատեսվածից ավելի, ձմռանը ճանապարհի ծածկը մի կերպ դիմանում է, իսկ ամռանը, երբ շոգից ասֆալտը «թուլանում» է, անվահետքեր են գոյանում: Ելքը մեկն է. ամռան արգելել գերբեռնված մեքենաների երթևեկությունը կամ թույլ տալ դրանք երթևեկել գիշերային ժամերին: Խնդիրը լուրջ է, եւ կարոտ պետական միջամտության, մասնավոր չէ, որ այլընտրանք էլ ունենք՝ Կապան-Ծավ-Մեղրի ճանապարհը:

Ինչ խոսք, որ մեղրեցի ճանապարհաշինարարների սպասարկած տարածքը դրականորեն տարբերվում է ամբողջ հանրապետությունում. այդ առումով նկատառումներ ունի վաստակաշատ տնօրենը՝ նախապես նշելով, որ հանրապետության տարածքում ուրիշ լավ ճանապարհներ էլ կան. «Մեր տեխնիկան» մասը, թե ձմեռ ճանապարհին է, մեր մեջ չկա անսիրտ ճանապարհաշինարար, որ հանկարծ մի բար նկատի ճանապարհի վրա, չկանգնի ու չվերցնի: Գասպարյանի լավ վիճակն ամենօրյա խնամքի արդյունք է, եթե այսօրվա ընկած բարը չվերցնես, վաղը դրան ավելանում են երկրորդը, երրորդը, չորրորդը... Եւ ճանապարհն անտեր ու խեղճ է թվալու: Գասպարյանը կենդանի օրգանիզմ է, նրան տեղ է պետք, ամենօրյա տեղ...»:

Կորուսվածի համավարակը խառնել է աշխարհը, մեղրեցի ճանապարհաշինարարների համար ինչպես են ընթանում աշխատանքներն արտակարգ պայմաններում:

– Իրականում բավականին բարդ իրավիճակ է, բայց բանի որ ճանապարհաշինարարները բաց տարածքում են աշխատում, դիմակ կրելու անհրաժեշտություն առանձնապես չկա: Եթե պահանջում են, որ մարդիկ պահպանեն սոցիալական հեռավորություն (1,5-2 մետր), մենք նման խնդիր չունենք, աշխատանքի բնույթից ելնելով մարդիկ միմյանցից հեռու են լինում: Եվ այդուհանդերձ՝ աշխատողներին դիմակներ, ձեռնոցներ, ախտահանող նյութեր ենք հատկացրել: Մեղրիում կորուսվածի վարակածության դեպքեր վերջերս արձանագրվել են, ինչը հուշում է, որ խստորեն պիտի հետեւեն սանիտարահիգիենիկ պահանջներին, պարետատան հորդորին: Ընկերության վարչական շենքի մուտքը դիմակներով ու ձեռնոցներով է, եւ էլ աշխատակիցների հետ շփվում են դիմակ ու ձեռնոց կրելով, որբան էլ ամռան այս տապին դժվար ու անսովոր է այդպիսի վիճակով լինելը:

Լորից դառնալից շինարարությանը (խոսքը 10 կմ հիմնանորոգվող հատվածի մասին է), որ նախատեսվում է ավարտել նոյեմբերին՝ մինչև ձմեռային տեղումները սկսվելը: Տեղանքը թույլ է տալիս տեղավորվել այդ ժամկետում: Եթե նախկինում ճանապարհաշինարարական աշխատանքներ էին իրականացվում բարձր գոտում, որտեղ առկա էին կիրճեր, սարեր, ձորեր, մեծ թեքություններ, եւ չնախատեսված դժվարություններ էին հանդիպում, ապա այս անգամ հիմնանորոգվող ճանապարհի մոտ 200 մետրն է դժվարամատչելի, մյուս մասը համեմատաբար հեշտ հարթահարթի է:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ

**CHAARAT**  
**ԿԱՊԱՆ**  
**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
Հարգելի համաքաղաքացիներ, Համաճարակային այս շրջանը հաղթահարելուց հետո Կապանի համայնքապետարանը նախատեսում է ՇՄՎՈՒՄ Մովսիսյանի անվան պատմության թանգարանի սրահներից մեկը նվիրել Կապանի հանքարդյունաբերության ոլորտին եւ ակնկալում է նաեւ ձեր աջակցությունը նյութերի հավաքման գործում: Հավաքում ենք Կապանի լեռնահարստացման կոմբինատի (Ներկայիս «Չարատ Կապան» ՓԲԸ) պատմությունը ներկայացնող տարբեր տարիների լուսանկարներ, վավերագրեր, փաստաթղթեր, անձնական իրեր, ձայնագրություններ, տեսաֆիլմեր եւ այլն: Նյութեր ունենալու դեպքում խնդրում ենք այն ներկայացնել համայնքապետարանի մշակույթի բաժնի կամ սքանավորված տարբերակով ուղարկել հետեւյալ էլեկտրոնային հասցեին՝ GalstyanTereza@mail.ru Խնդրում ենք անտարբեր չլինել, տարածել եւ արձագանքել:

**ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՐԴՅԱՆՈՒԹՅԱՆ /KAPAN MUNICIPALITY**



# Սվետլանա Գեւորգյանը 80 տարեկան է. շնորհավորում ենք

**Ակնավայել եւ ընդունելի լինելը քչերի մենաշնորհն է: Նման երեւելիներից է սյունեցի փառահեղ տիկին Սվետլանա Գեւորգյանը:**

Ծնողները սերում են Քաջարանից: Բնակվել են հանքաշխարհի կենտրոնատեղի Լենինաբեր բանավանում: Կարգին կրթություն է ստացել, եռանդուն, ժրպշան ու գործունյա հասարակական-քաղաքական գործիչ էր եւ է:

Աշխատանքային գործունեությունն սկսել է դպրոցում՝ ավագ ջոկատավար, հետո՝ տարբեր պաշտոններ է զբաղեցրել՝ քաղաքացիական գործկոմի քարտուղար, մշակույթի բաժնի վարիչ, կենցաղվարչության տնօրէն, կենսաթոշակի անցնելուց հետո՝ գրադարանների միավորման ղեկավար:

Հիշյալ պաշտոններում աշխատելը Ս. Գեւորգյանի համար խաղաղար էր:

Թեւեւ Կապանում գործող հիմնարկ-ձեռնարկությունների եւ ղեկավարների դաշտում իր յուրահատուկ տեղն է զբաղեցրել եւ

հասարակության մեջ իր գործունեությամբ մեծ հեղինակություն ու բարձր վարկանիշ են ձեռք բերել կենցաղվարչությունը եւ նրա տնօրէնը, սակայն միշտ այն կարծիքին են եղել, որ տիկին Սվետլանայի ուժերը հավուր պատշաճի չեն օգտագործվել: Զգիտեմ, առիթ չի եղել հետաքրքրվելու՝ այլ պաշտոնի առաջարկություններ եղել են, թե՛ ոչ: Ենթադրում են՝ ոչ: Նա ի գորու էր շրջան եւ քաղաք ղեկավարելու: Սվետլանա Գեւորգյանը երկար տարիներ կանանց հանրապետական խորհրդի վարչության անդամ էր, Կապանի կանանց խորհրդի նախագահը:

Ինչեւէ, ժամանակին նրա աշխատանքը գնահատվել է սովորաբանակ պարգևներով՝ պատվո Նշան ու շքանշան, պատվոգիր ու գովասանագիր... Սակայն ամենամեծ ու շքեղ պարգևը կապանցիների անթաքույց սերն ու հարգանքն է իր սիրասուն դստեր հանդեպ:

Քաղաքը բազմահարկ շենքերի, ավտոմեքենաների, գլխարկների վայրերի լիությունը չէ: Քաղաքը՝ մտածելակերպ է, ապրելու ձև, հյուր եկած քաջանուն մարդկանց



աստղաբույ: Պատվարժան տիկինը յուր ժամանակին

Կապան այցելած մեծերի հետ սեղան է նստել, հարցրակցվել՝ Վիլյամ Սարգսյան, Անաստաս Միկոյան, Գովհանես Բաղդասյան, Զարուհի Դոլուխանյան, Էդուարդ Միրզոյան, Խորեն Աբրահամյան...

Շնորհաշատ ու բարեգութ տիկինը 10 օր շարունակ խնամել է Երեւանի հիվանդանոցներից մեկում պառկած քանթարավոր Միեր Մկրտչյանին:

Դժնդակ օրեր, տարիներ... Մութ ու ցուրտ, ումբակոժող ու հրի մեջ գտնվող քաղաք: Այդ ժամանակ էլ անգործ չմնաց, օրապահեց հիվանդանոցներում՝ գործկոմի օգնելով վիրավորներին ու բուժանձնակազմին:

Առօրյայում անպաճույճ ու հասարակ կին է, յուրօրինակ հմայքի տեր, արագախոս, նրբազգաց ու շատ հումորով գրուցակից:

Նա հրաշալի է կատարում իր՝ Մարդու դերը:

Առույգատես է, միտքը՝ սուր, դժվար իրավիճակներում կողմորոշվում է վայրկենապես: Ազնիվ, պարտաճանաչ, անշահախնդիր, նորարարության ջատագով տիկինը վարուց է սերտել սեական «դասը»:

**Ապրել, ապրել, այնպես, ապրել, որ սուրբ հողը երբեք չզգա քո ավերորդ ծանրությունը:**

Միով բանիվ՝ Սվետլանա Մամբրեւեան: Բարեմաղթանքներս ու օրհնանքս ծննդատունից: Ողջ լին:

ԼԵՆՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Ճանապարհային ոստիկանության Գորիսի հաշվառման-քննական խմբի մեկ օրը

**Արտակարգ դրությունը, բազմաթիվ սահմանափակումներով եւ դժվարություններով հանդերձ, մեր կյանքի բոլոր ոլորտներում նոր պայմաններում ապրելու եւ աշխատելու հրամայականի առջեւ է կանգնեցրել մեզ:**

Նման պարտադրանքի առջեւ են կանգնել նաեւ Հայաստանի Հանրապետության Ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական ստորաբաժանումները:

Մայիսի 22-ին ծանոթանալով Գորիսի հաշվառման-քննական խմբի գործունեությանը, անհնար էր չտեսնել, որ խմբի աշխատակազմը, ոստիկանության փոխգնդապետ Արմենակ Վարդանյանի գլխավորությամբ, ստեղծված իրավիճակում հաջողությամբ է իրականացնում իր գործառնությունները բնակչության սպասարկման ուղղությամբ:

Գորիսի հաշվառման-քննական խմբում վարորդական իրավունքի տեսական քննության օր էր:

Քննություն էին հանձնում «Սիսիանի ավտոդպրոց» ՍՊ ընկերության՝ Արշավիր Գաբրիելյանի խմբի 18 սովորող, ովքեր հուլիսի 1-ին կգորակոչվեն Հայոց ազգային բանակ:

Տրաները որոշակիորեն լարված էին քննասենյակ մտնելուց առաջ, ինչը խմբի ղեկավար, դասատու Արշավիր Գաբրիելյանը բնական իրավիճակ է համարում, որը եւ վկայում է ապագա վարորդների պատասխանատվության զգացումի մասին:

– Երկար տարիներ համագործակցում ենք ՀՀ ոստիկանության Ճանապարհային ոստիկանության Գորիսի հաշվառման-քննական խմբի հետ: Քննություններն անցնում են պրոֆեսիոնալ բարձր մակարդակով: Եվ դա՛ հատկապես ավագ տեսուչ, ոստիկանության փոխգնդապետ Արմենակ Վարդանյանի եւ տեսուչ, ոստիկանության մայոր Վարդգես Մկրտչյանի շնորհիվ, – ասաց Արշավիր Գաբրիելյանը:

Չնայած օրը ծանրաբեռնված էր՝ պայմանավորված գինեկոչիկների քննությամբ եւ քաղաքացիների այցելություններով, փոխգնդապետ Արմենակ Վարդանյանը ժամանակ գտավ պատասխանելու մեր հարցերին:

– Պարոն փոխգնդապետ, արդյո՞ք ռիսկային չէ համաճարակի պայմաններում վարորդական իրավունքի համար տեսական քննության անցկացումը:

– Բոլոր պայմանները ստեղծված են քննության մասնակիցների անվտանգությունն



ապահովելու համար: Ինչպես տեսնում եք՝ եւ մեր աշխատակիցները, եւ դպրոցի սաներն ու նրանց դասատուները դիմակով ու ձեռնոցով են, դռան մոտ էլ ախտահանող կյուբեր են դրված:

– Այսօր, որքանով տեսնում ենք, տեսական քննություն է, արդյո՞ք գործնական քննություն է Գորիսում կանցկացնեն Սիսիանի ավտոդպրոցի սաները:

– «Սիսիանի ավտոդպրոց» ՍՊ ընկերության սաները գործնական քննությունը կհանձնեն Սիսիանում ավտոդպրոցի տարածքում, որը կախավորված է հատուկ տրանսպորտային միջոցներով: Ենթադրում են՝ մեկ շաբաթից տեղի կունենա գործնական քննությունը:

– Այսօր արդեն հասցրել եք մի բանիսից քննություն ընդունել, ձեր նախնական տպավորությունը:

– Առանց չափազանցության՝ «Սիսիանի ավտոդպրոց»-ի սաները միշտ էլ աչքի են ընկել պատրաստվածությամբ, հիմնավոր գիտելիքներով:

Այսօրվա քննությունը նույնպես ասվածի վկայությունն է:

– Պարոն Վարդանյան, արտակարգ դրության ժամանակ Ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական ստորաբաժանումներում եւս որոշ սահմանափակումներ էին մտցվել, դադարեցվել էր մի շարք ծառայու-

թյունների մատուցումը: Արդյո՞ք այդ սահմանափակումները շարունակվում են:

– Մայիսի 18-ից Ճանապարհային ոստիկանության հաշվառման-քննական ստորաբաժանումներում, աղ թվում մեր խմբում, կատարվում են բոլոր ծառայությունները:

Եթե արտակարգ դրության նախորդ շրջանում ապահովում էինք միայն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառումը, վարորդների կորցրած վկայականների փոփոխումը, ժամկետանց վարորդական իրավունքի վկայականների փոփոխումը եւ այլն, ապա հիմա, ինչպես նշեցի, իրականացվում են բոլոր ծառայությունները: Այդ է պատճառը, որ քաղաքացիների մեծ հոսք կա այս օրերին, ինչի համար էլ, նաեւ մարդկանց կուտակումներից խուսափելու համար, հաճախորդներին սպասարկում ենք աշխատանքային օրվա ավարտից հետո նույնպես:

\*\*\*

...Կեսօրից հետո մենք հեռացանք Ճանապարհային ոստիկանության Գորիսի հաշվառման-քննական խմբի տարածքից, իսկ ավագ տեսուչ Արմենակ Վարդանյանը եւ տեսուչ Վարդգես Մկրտչյանը, խմբի մյուս աշխատակիցների հետ, քննությունից հետո դեռ պետք է աշխատեին այլ հարցերով այնտեղ այցելած քաղաքացիների հետ:

# Արցախի անվտանգության խորհրդի քարտուղար, գեներալ-լեյտենանտ, Արցախի հերոս Սամվել Բաբայանին

**Մեծարգո պարոն Բաբայան**

Առողջական խնդիրների պատճառով չեմ կարողանում մեղրից հասնել Ստեփանակերտ ու անմիջականորեն արտահայտել ուրախությունս Ձեր եւ Ձեր զինավորած քաղաքական ուժի վաստակած ու սպասված հաջողության համար, որին ականատես եղանք Արցախի Հանրապետության Ազգային ժողովի 2020 թ. մարտի 31-ին կայացած ընտրության արդյունքում: Ուստի եւ այսկերպ եմ փոխանցում ասելիքս:

Ընդունեք սրտաբուխ շնորհավորանքս Արցախի հերոսական ժողովրդի վստահությանը վերստին արժանանալու, ինչպես եւ Արցախի անվտանգության խորհրդի քարտուղարի պատասխանատու պաշտոնում նշանակվելու կապակցությամբ:

Դուք, հիրավի, Արցախյան գոյակովի լեգենդար հրամանատարներից եք: Եվ պատահական չէ, որ բազում փորձությունների միջով անցնելուց ու հանիրավի հետապնդումներից հետո Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը չկորցրեց իր հավատն ու վստահությունը Ձեր հանդեպ:

Քաջատեղյակ լինելով Ձեր կյանքի ուղուն, Ձեր գաղափարական հավատամքին ու մարդկային հատկանիշներին, վստահ եմ, որ պետական-քաղաքական նոր դերակատարությամբ հերթական անգամ ծանրակշիռ ներդրում կունենանք Արցախի Հանրապետության հզորացման, հաղթանակած մեր ժողովրդին վայել վարկանիշի ու դիրքերի, նաեւ մեր միասնության վերականգնման, հայ ժողովրդի պատկերացումներին համահունչ Արցախյան հիմնախնդրի վերջնական կարգավորման գործում:

Այդ ճանապարհին, անտարակույս, բազում սյունեցիներ ձեռք ձեռքի կտան Ձեզ հետ, բանազի Սյունիքն ու Արցախը եղել եւ մնում են մեկ մարմին, բանազի Սյունիքի եւ Արցախի երթը՝ հավերժին միտված, անկասելի է:

Ձեզ հաջողություններ: Աստված Ձեզ պահպան: **Հարգանքով՝**

**ՄԱՐԿՍ ՕՅՆՆՅԱՆ**  
Ե. ՄԵՂՐԻ, 6 ՅՈՒՆԻՍԻ 2020 թ.



Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի շենքը Երեւանում

# ՍԵՅՐԱՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ. ճանաչված գիտնականը, մանկավարժն ու կազմակերպիչը

Սկզբը՝ էջ 4

2001-2003թթ. Գյումրու մասնաճյուղի եւ Երեւանի կրթահամալիրի գիտական խմբերի հետ համատեղ մասնակցել է մոլիբդենի հանքանյութի ֆլուտացման տեխնոլոգիական գործընթացի ԱԿՀ-ի մշակմանը՝ Նվիրված, Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC) կողմից ֆինանսավորվող նախագծին: 2011-2014թթ. ՀՊՄԿ-ի ֆինանսավորմամբ Ս. Բալասանյանի ղեկավարությամբ գործող խումբը հաջողությամբ կատարել է «Մոլիբդենի հանքանյութի ֆլուտացման տեխնոլոգիական գործընթացի հավանականային կառավարման մոդելի մշակումը» թեմայով գիտահետազոտական նախագիծը, որի արդյունքները ներկայումս գտնվում է ներդրման փուլում:

2015թ. Ս. Բալասանյանը պաշտպանել է «Բարդ տեխնոլոգիական համակարգերի ստրատիգիկացված մոդելավորման հիմունքների մշակում՝ հուսալիության հաշվառմամբ» թեմայով դոկտորական ատենախոսությունը՝ ստանալով տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 2016 թվականին՝ պրոֆեսորի գիտական կոչում:

Նա հեղինակ է 81 հրատարակված գիտական աշխատանքի, այդ թվում՝ Գերմանիայի Դաշնությունում հրատարակված մեկ գիտա-

կան մենագրության: Արժանացել է ՀԱՊՀ-ի 2011-2012թթ. հրատարակված «Լավագույն գիտական հոդվածաշար» մրցանակաբաշխության 1-ին մրցանակին:

Ս. Բալասանյանը հնարավորինս օժանդակել է դասախոսների գիտահետազոտական գործունեությանը: 2007-2017 թթ. ընթացքում մասնաճյուղի 6 դասախոս եւ 7 ուսանող պաշտպանել են թեկնածուական, իսկ մեկ դասախոս՝ դոկտորական ատենախոսություններ: Նա ղեկավարել է շուրջ 20 մագիստրոսի եւ 4 ասպիրանտի ատենախոսություն, որոնցից 2-ը հաջողությամբ պաշտպանել է:

Ս. Բալասանյանը զգալի աշխատանք է կատարել մասնաճյուղի միջազգային համագործակցության ոլորտում: Նա 1999-2009 թթ. գործուն մասնակցություն է ունեցել ՀՊՄԿ-ի կողմից իրականացվող Tempus-Tacis միջազգային ծրագրերին, որոնք Նվիրված են եղել համալսարան-արդյունաբերություն համագործակցության զարգացմանը, ՀՊՄԿ-ի ստրատեգիական պլանի մշակմանը, կրեդիտային համակարգի ներդրմանը:

2012 թվականից մասնաճյուղին առաջին անգամ, որպես ինքնուրույն կատարող, մասնակցել է «Արդյունաբերական համագործակցություն եւ ստեղծագործ ճարտարագիտական կրթություն» հիմնված

հեռավար ու վիրտուալ գործիքակազմի վրա» (530278-TEMPUS-1-2012-1-DE-TEMPUS-JPHES) նախագծին: Ս. Բալասանյանը նախագծի տեղային համակարգողի կարգավիճակով՝ իր փոքրաթիվ թիմով, հաջողությամբ իրականացրել է այն: Այդ նախագծի շրջանակում ձեռքբերված 27000 եվրո արժողությամբ GOLDI հեռավար հիբրիդային լաբորատորիան Նրա ջանքերով 2018 թվականից հաջողությամբ ներդրվել է մասնաճյուղի ՏՏ, Ի եւ ԱՀ ամբիոնի ուսումնական գործընթացում:

Ս. Բալասանյանը 2011-2014թթ. եղել է ՀՊՄԿ կառավարման խորհրդի անդամ:

2016 թվականից ՀԱՊՀ-ում գործող դոկտորական եւ թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության «Կառավարում եւ ավտոմատացում» 032 մասնագիտական խորհրդի անդամ է:

Երիտասարդական ավյունով լի Ս. Բալասանյանն առանց ջանք ու եռանդ ինայելու ՏՏ, Ի եւ ԱՀ ամբիոնի ղեկավարի պաշտոնում շարունակում է իր պատասխանատու գիտամանկավարժական գոր-

ծունեությունը՝ ապահովելով մասնաճյուղի հետագա առաջընթացը:

Ս. Բալասանյանի բազմամյա, անբասիր աշխատանքն ըստ արժանույն է գնահատվել: Նա պարգևատրվել է ՀՀ վարչապետի հուշամեդալով (2008թ.), ՀՊՄԿ Ոսկե հուշամեդալով (2007թ.), ՀՀ ԿԳ նախարարության Ոսկե հուշամեդալով (2003թ.), «Մայրական երախտագիտություն» հուշամեդալով (2009թ.)՝ (ԼՂՀ «Մայրություն» կոմիտե):

Հմուտ, բանիմաց եւ գործունյա անձնավորություն է պրոֆեսոր Ս. Բալասանյանը: Պարկեշտ է, օրինավոր, օժտված է բարձր բարոյականային հատկանիշներով, պահպանում է տարածում է պոլիտեխնիկական լավագույն ավանդույթները: Պահանջկոտ է իր, գործընկերների եւ ուսանողների հանդեպ: Անհաշտ է բացասական երեւույթների նկատմամբ:

Հարգելի Սեյրան Շավիրի, մասնաճյուղի դասախոսական կազմը, աշխատակիցները եւ ուսանողները սրտանց շնորհավորում են Ձեզ՝ 75-ամյա հորեյսակի եւ աշխատանքային գործունեության կեսդարյա տարեդարձի առթիվ, մաղթում են համատեղ երկարամյա բեղմնավոր աշխատանք, ամուր արողջություն եւ ամենայն բարիք: **||**



## Հայրենի եզերք. Կաղնուտ

Սեյրան Բալասանյանի ծննդավայր Կաղնուտը մատենագիտության մեջ Նշվում է Նաեւ այլ անվանումներով՝ Մողես, Մուկես, Նավրուզլու, Նովրուզլու:

Գյուղը գտնվում է Կապան քաղաքից մոտ 28 կմ հյուսիս-արեւելք, Բարգուշատի լեռնաճյուղերից մեկի լանջին, չորս կողմից պատած անտառներով, իսկ գյուղի մեջ ամենուրեք հանդիպում են պտղատու ծառերի այգիներ եւ պարտեզներ:

Հայաստանի ամենազեղատեսիլ վայրերից է: Հնում մտնում էր Սյունիքի Աճանան գա-

վառի, հետագայում՝ Ելիզավետպոլի Նա հանգի Չանգեզուրի գավառի մեջ: Կաղնուտ է վերանվանվել 1949 թ. ապրիլի 29-ին:

Գյուղի մերձակայքում պահպանվել են միջնադարյան կիսավեր եկեղեցի (Անսպատ), գերեզմանոցներ եւ հին բնակավայրի մնացորդներ:

Այդ հին գյուղատեղիի տեղացիները կոչում են Հոնսպատ:

1830 թ. գյուղում հաստատվել են Իրանի Ղարադաղ գավառից եկած հայեր: **||**

## Առաջարկվում է 4000 եւ ավելի ընտրող ունեցող համայնքներում անցնել համամասնական ընտրակարգի

Սկզբը՝ էջ 1

ընտրակարգով ընտրվող համայնքապետը շատ դեպքերում 1-2 տոկոսով, երբեմն նաեւ մի քանի ձայնով պարտություն էր կրում, եւ տվյալ քաղաքական ուժի ներկայացուցիչը 5 տարի շարունակ դուրս էր մղվում տվյալ համայնքում քաղաքական դերակատարում ունենալուց: Այս օրենքի նախագիծը երաշխավորում է, որ այդ համայնքում կլինի

առողջ, քաղաքական մթնոլորտ, այն մոդելը, որ առկա է խորհրդարանում, կտեղափոխվի նաեւ տեղական ինքնակառավարման մարմիններ»:

Նախարարը հիշեցրեց, որ այսօր՝ հեղափոխությունից երկու տարի անց, շատ համայնքներում շարունակում են պաշտոնավարել նախկին իշխանությունների օրոք ընտրված ղեկավարները, թե ինչպես են ընտրվել, հիմա այդ մասին խոսելն ավելորդ է: Սակայն օրենքի այս նախագիծը, Պապիկյանի պնդմամբ, այսուհետեւ կտրելու է ազգակցական, նաեւ կրիմինալ կապերի վրա հենված մտածողությունը. «Ես որեւէ համայնքապետի հետ երբեւէ որեւէ խնդիր, ընդ որում նրանց ընտրված ժամկետի հետ որեւէ խնդիր չեմ ունեցել, բայց մի բան հստակ է, որ հասարակության տարբեր շերտեր, նաեւ քաղաքական տարբեր կուսակցություններ մեզ մեղադրում են, որ մենք հարմարվողականություն ենք



**Նախարարը հիշեցրեց, որ այսօր՝ հեղափոխությունից երկու տարի անց, շատ համայնքներում շարունակում են պաշտոնավարել նախկին իշխանությունների օրոք ընտրված ղեկավարները:**

որստերել եւ շարունակում ենք աշխատել այդ համայնքապետերի հետ: Այդ համայնքապետերին ընտրել է ժողովուրդը տարբեր կերպ, չգիտեմ, բայց մենք հիմա հնարավորություն ենք ընձեռելու, որպեսզի Հայաստանի քաղաքացին իր համայնքում հաստատի իր իշխանությունն

ամբողջությամբ, ինքը որոշի՝ ով է լինելու իր համայնքի ղեկավարը: Կարող են այդ համայնքի ղեկավարները լինել նաեւ նախկինում ընտրված համայնքի ղեկավարներ, եւ չգիտեմ, դա կախված է տվյալ մարդկանց հեղինակությունից, անցած ճանապարհից»:

Փոփոխություններ են առաջարկվում նաեւ համայնքների ավագանիների թվաքանակի, ընտրական գրավի չափի, նախընտրական հիմնադրամների ձեւավորման վերաբերյալ կարգավորումներում: Առաջարկվում է մասնաճյուղի բաշխմանը մասնակցելու համար անցողիկ շեմ կուսակցությունների համար սահմանել 4 տոկոս՝ գործող 6-ի փոխարեն, իսկ կուսակցությունների դաշինքի համար՝ 6 տոկոս՝ գործող 8-ի փոխարեն: Առաջարկվում է նաեւ օրենսգրքից հանել մանդատների առկայությունը 40 տոկոս ստացած կուսակցության ընտրական բոնուսը, որը, նախարարի պնդմամբ, բազմիցս բննադատվել է: **||**

**Սյունյաց երկիր**

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿԵՏԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԷՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 285) 5 25 63  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru  
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կյուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՐՎԱԾԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող կյուբերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հոլմը «Սյունյաց երկրին» պարտադիր է: © Նշանի տակ տպագրվում են գովազդային կյուբեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 16.06.2020թ.: